Հրապարակման ենթակա չէ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 2-ը քաղաք Բրյուսել (Բելգիայի Թագավորություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ռուզաննա Կուսիկյան – ՀՀ ՊԵԿ Մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության պետի տեղակալ

Լևոն Նալբանդյան - ՀՀ ՊԵԿ «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ Նախագծային ռիսկերի կառավարման դեպարտամենտի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել, 2024թ. սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 2

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն 2024թ. սեպտեմբերի 23-ից 27-ը կայացած ՀՄԿ Տվյալների մոդելի նախագծային թիմի, հոկտեմբերի 1-ից 2-ը Ֆոկուս խմբի 70-րդ նստաշրջանի և հոկտեմբերի 1-ից 2-ը Ոչ ինտրուզիվ (տեղային) զննման տեխնիկական փորձագետների խմբի 11-րդ նիստերին:

5. Քննարկված թեմաները՝

ՀՄԿ տվյալների մոդելին նվիրված նիստի ընթացքում քննարկվել են ՀՄԿ անդամների՝ տվյալների համախմբի կառուցվածքի և ձևաչափի ներկայիս հաստատված նախորդ 3.1.X տարբերակներից, արդեն իսկ ընդունված 4.1.0 տարբերակին անցման

հնարավորությունները, երկրները ներկայացրեցին անցման հնարավոր ժամկետները և անցման վերաբերյալ դժվարությունները:

Միևնույն ժամանակ քննարկվեցին ներկայումս մշակվող 4.2.0. տարբերակում ներառման նպատակով կողմերի ներկայացված առաջարկները: Հիմնականում դրանք պայմանավորված են կոնկրետ երկրներում մաքսային գործընթացների և ընթացակարգերի առանձնահատկություններով:

Մասնավորապես, առաջարկվեց, որ ունիֆիկացվեն BRI/PNR համակարգում ուղևորների վերաբերյալ հավաքագրվող տվյալները՝ դասակարգելով ձեռք բերված ավիա և նավի տոմսերի «դասը»: Սակայն աշխատանքային խմբի մասնակիցներին երկարատև քննարկումներից հետո չհաջողվեց գտնել միասնական դասակարգիչ, քանի որ ավիափոխադրողների, ծովային փոխադրողների, կողմից դասակարգումը չի իրականացվում միանման, և ելնելով մարքետինգային տարբերություններից՝ դրանք դասակարգում են յուրովի, և նույանկանացումն այս պահին հնարավոր չէ:

Հաջորդիվ ԱՄՆ ներկայացուցիչը հանդես եկավ բոնդային պահեստների տեսակների դասակարգիչներ սահմանելու առաջարկով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կախված բոնդային պահեստների մատուցվող ծառայությունների տեսակներից՝ դրանք ներկայացնում են երաշխիքային ապահովում, և անհրաժեշտություն կա դասակարգչից կախված՝ սահմանել երաշխիքի չափը: Քննարկվեց նաև երաշխիքի եզրույթը (bond կամ guarantee), և որոշվեց ընտրել ընդհանուր guarantee եզրույթը՝ դրա ներքո դասակարգման տեսակներով տարանջատելով դրանք:

Այլ երկրների մասնակիցները հանդես եկան առաջարկով, սույն տվյալների լույսի ներքո կատարել փոփոխությունները ոչ թե առանձին դասակարգչի սահմանմամբ, այլ լրացուցիչ տվյալներ հավաքագրել ներկայացվող տվյալները երաշխիքների վերաբերյալ տվյալների համախմբում:

Քննարկվեց նաև ապրանքային նշանների և ապրանքների վերաբերյալ լրացուցիչ տվյալների՝ ապրանքային հայտարարագրի կազմում ներառելու, թե առանձին կառուցվածք սահմանելու հարցը, սակայն այս փուլում որոշում չկայացվեց:

Ոչ ինտրուզիվ (տեղային) զննման աշխատանքային խմբի ընթացքում ելույթ ունեցան ինչպես մաքսային մարմինների ներկայացուցիչներ, այնպես էլ ռենտգեն հսկողության

սարքավորումներ արտադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ներկայացնելով իրենց արտադրանքը և փորձը:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ, այլ երկրներում՝ մաքսային հսկողության տարբեր գոտիներում, ներդրված են ինչպես նույն արտադրողի տարբեր տարեթվերին թողարկված սարքավորումներ, այնպես էլ տարբեր արտադրողների:

ՀՄԿ-ի ներկայացուցիչները առաջարկեցին, որ ռենգեն սարքավորումների արտադրողները իրենց ծրագրային փաթեթներում ներառեն միասնական ստանդարտացված հարցումների միջոցով տվյալների ստացման հնարավորությունը:

Սույն գործիքի միջոցով մաքսային մարմինները կկարողանան ունենալ մեկ միասնական հարթակ ստեղծելու հնարավորություն:

Արտադրողները համարեցին հնարավոր մոտեցումների կիրառությունը, սակայն շեշտեցին նաև որ յուրաքանչյուր արտադրող ունի իրեն բնորոշ տվյալների կառուցվածք, և դրանք պետք է բերվեն միասնական ստանդարտի, որից հետո հնարավոր կլինի վերադառնալ սույն հարցին:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին նաև ստացվող նկարների մշակման նպատակով վերլուծական գործիքներ մշակող տեխնոլոգիական կազմակերպությունների կողմից առաջարկվող լուծումներ:

Հիմնական շեշտը դրված էր երկու հանգամանքի վրա՝ տնտեսական, մաքսային կամ այլ համագործակցության ձևեր ունեցող երկրների միջև ռենգեն նկարների փոխանակումը և արհեստական բանականության գործիքների կիրառությամբ դրանց վերլուծությունը:

Առաջարկը հիմնված էր այն հանգամանքի վրա, որ քանի որ նույն տարածաշրջանների, արտահանման/ներմուծման նույն տնտեսական հետաքրքրությունների մաս կազմող գոտիներում գտնվող մաքսային ծառայությունները փոխանակվեն հայտնաբերված խախտումներով ռենգեն նկարներ, մյուս երկրների արհեստական բանականության ուսուցման աստիճանը բարձրացնելու հպատակով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տվյալների մոդելի քննարկման շրջանակներում ներկայացվել է իրավիճակը ՀՀ-ում, մասնավորապես ԵԱՏՄ շրջանակներում սահմանված կառուցվածքներով և ձևաչափերով

պայմանավորված սահմանափակումները: Միևնույն ժամանակ, այն նոր ներդրվող համակարգերի մասով, որոնցով սահմանված չեն ԵԱՏՄ կառուցվածքներ և շտեմարաններ (օրինակ՝ API և PNR համակարգեր) կարելի է համակարգերի մշակման և ներդրման փուլում արդեն իսկ նախատեսել ՀՄԿ տվյալների մոդելի գործող տարբերակին ամբողջական համապատասխանությունը:

Ոչ ինտրուզիվ զննման վերաբերյալ նիստի շրջանակներում ներկայացվել է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից նախատեսվող աշխատանքների, մասնավորապես նմանատիպ գործընթացներ նախաձեռնելու հնարավորությունների դիտրկումը:

Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների կողմից հարց ուղղվեց ՀՄԿ ներկայցուցիչներին նմանատիպ փորձարկումներին մասնակից լինելու և այլ պետությունների մաքսային մարմինների ռենգեն նկարների շտեմարաններից օգտվելու հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև դրանց մշակման հնարավոր տեխնոլոգիաներ ստանալու մասին:

Ի պատասխան առաջարկվեց դա կատարել աշխատանքային նամակագրության եղանակով, և նրանց կողմից կդիտարկվի հնարավոր փոխգործակցության եղանակները, ինչպես երկկողմանի, այնպես էլ ՀՄԿ միջոցով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նշված հանդիպումների ժամանակ կազմվել են աշխատանքնային արձանագրություններ, փաստաթղթեր չեն ստորագրվել, տեղի են ունեցել փորձագետների քննարկումներ և շնորհանդեսների ներկայացումներ, որոշվել է շարունակել աշխատանքները համապատասխան ձևաչափերով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առաջարկվում է նոր ներդրվող համակարգերի դեպքում դրանց համար ՀՄԿ տվյալների մոդելի շրջանակներում տվյալների կազմ նախատեսված լինելու դեպքում

դիտարկել այդ համակարգերի տվյալների կազմի՝ հնարավորինս ՀՄԿ տվյալների մոդելին գործող տարբերակին համապատասխանության հնարավորությունները:

Ոչ ինտրուզիվ զննման վերաբերյալ քննարկման արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ոչ ինտրուզիվ (տեղային) զննման ուղղությամբ կատարվող աշխատանքները կատարվում են ճիշտ ուղղությամբ, սակայն դրանք հնարավոր չէ իրականացել միայնակ, պարփակված ներքին գիտելիքով և հնարավորություններով:

Հարկավոր է դիտարկել համագործակցության և այլ կատարողների ներգրավման հնարավարություններ, այդ թվում՝ այլ պետությունների մաքսային մարմինների ռենգենային պատկերների շտեմարանից օգտվելու հնարավորությունները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Ռուզաննա Կուսիկյան

Լևոն Նալբանդյան

07.10.2024թ.